ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից 2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

1. Ունեցել ենք ինչպես տեղացի, այնպես էլ օտարերկրացի՝ 848 այցելու, ովքեր շրջել են պարկի տարածքում: Նրանց ներկայացվել է ազգային պարկի կենսաբազմազանությունն ու զբոսաշրջային հնարավորությունները:
2. Իրականացվել է ՊՈԱԿ-ի վարչական շենքի բակի և հարակից տարածքի մաքրման աշխատանքներ:
3. Իրականացվել է ֆոտոթակարդի տեխսպասարկման աշխատանքներ:
4. Իրականացվել է կրթադաստիրակչական դասընթացներ մարզի դպրոցներում: Ընդհանուր 14 կրթադաստիրակչական միջոցառում,որին մասնակցել են թվով 430 աշակերտ և մանկավարժ:
5. Սիրողական ձկնորսությամբ զբաղվողների հետ տարվել են բացատրական աշխատանքներ՝ անվտանգության կանոնները և պարկի ռեժիմը պահպանելու վերաբերյալ:
6. Կատարվել են թարմացումներ ազգային պարկի սոցիալական կայքերում թե որպես ամենօրյա կատարվելիք աշխատանքների մասին նաև գիտական ինֆորմացիայի վերաբերյալ:
7. Իրականցվել է մոնիթորինգ ազգային պարկի «Արևմտյան», «Ախուրյանի կիրճ» և «Արդենիս-Ալվար» տեղամասերում:
8. Իրականացվել է կենսաբազմազանության կադաստրի վարում, որի շրջանակներում իրականացվել է տարածքի ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի հաշվառում, համակարգված տվյալների հավաքագրում, վերլուծություն և թվայնացում:
9. Գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցների կողմից մշակվել և հաստատվել է տարեկան իրականացվելիք աշխատանքների օրացուցային պլան, որը ներառում է գիտահետազոտական, մոնիթորինգային, կրթական և էկոզբոսաշրջային միջոցառումների կազմակերպման փուլային ժամանակացույց: Պլանը կազմվել է ռազմավարական նպատակների և պահպանվող տարածքի կառավարման առաջնահերթությունների հիման վրա՝ ապահովելով ռեսուրսների արդյունավետ բաշխում և գործողությունների համակարգված իրականացում:

10. Գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցները ժամանակին և պատշաճ կերպով կատարել են իրենց ծառայողական պարտականությունները և տրված հանձնարարականները՝ պահպանելով մասնագիտական և էթիկական չափանիշները: Իրականացվել են դաշտային և գրասենյակային աշխատանքներ, այցելուների սպասարկում, գիտական տվյալների մշակում և հաշվետվությունների պատրաստում, ինչը նպաստել է կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացմանը և բնապահպանական նպատակների իրագործմանը:
11. Իրականացվել են զբոսաշրջային երթուղիների ուսումնասիրության, գնահատման կամ բարելավման աշխատանքներ: Այցելուներին տրամադրվել են խորհրդատվություններ և տեղեկատվական նյութեր:
12. Մասնակցություն խորհրդակցությունների, սեմինարների կամ աշխատանքային հանդիպումների:
13. Մշակվել են բուկլետներ, տեղեկատվական պաստառներ կամ կրթական նյութեր:
14. Տեղադրվել և վերանորոգվել են տեղեկատվական վահանակներ, ցուցանակներ:
15. Շարունակաբար իրականացվել են քաղաքացիների, զբոսաշրջիկների և տարբեր կազմակերպությունների կողմից ստացված հարցումների, դիմումների և տեղեկատվական հարցումների քննարկման ու պատասխանման աշխատանքներ՝ ապահովելով ազգային պարկի գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը:
16. Մոնիթորինգի շրջանակներում արձանագրվել և վերլուծվել են ազգային պարկի էկոհամակարգերի վիճակը բնութագրող տվյալները, որոնք ներառվել են համապատասխան հաշվառման և տվյալների բազաներում:
17. Կազմակերպվել և իրականացվել են այցելուների համար ճանաչողական էքսկուրսիաներ՝ ներկայացնելով ազգային պարկի բնական արժեքները, կենսաբազմազանությունը և պահպանության առանձնահատկությունները:
18. Իրականացվել են ծառատնկման աշխատանքներ ազգային պարկի Արևմտյան տեղամասում՝ անտառային էկոհամակարգերի վերականգնման, կանաչապատման և կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումների շրջանակներում: Ծառատնկման աշխատանքներն իրականացվել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ կանաչ համագործակցության շրջանակներում, որի արդյունքում ազգային պարկին տրամադրվել և տնկվել է 1000 հատ սոճու (Pinus spp.) տնկի: Նախապես իրականացվել են տարածքի ընտրության և հողի նախապատրաստման աշխատանքներ, որից հետո

տնկիները տեղաբաշխվել և տնկվել են՝ հաշվի առնելով տեղանքի հողակլիմայական և էկոլոգիական առանձնահատկությունները: Տնկման ընթացքում իրականացվել են նաև տնկիների ամրացման և հետտնկման խնամքի անհրաժեշտ միջոցառումներ՝ դրանց կպչողականությունն ու բնականոն աճն ապահովելու նպատակով: Իրականացված ծառատնկման աշխատանքները կնպաստեն Արևմտյան տեղամասի անտառածածկույթի ընդլայնմանը, բնական էկոհամակարգերի վերականգնմանը, հողերի էրոզիայի կանխարգելմանը և ազգային պարկի կենսաբազմազանության պահպանությանը:

19. Կատարվել է թռչունների և կենդանիների մշտադիտարկման աշխատանքներ, որի արդյունքում տեղամասերում գիտության և զբոսաշրջության աշխատակիցները ֆիքսել են՝

Կենդանատեսակի/թռչնատեսակի անվանում	**1-ին եռամսյակ**	**2-րդ եռամսյակ**
1) Սև ագռավ (լատին.՝Corvus corone)	111 հատ	87 հատ
2) աղվես (լատին.՝ Vulpes vulpes)	11 հատ	13 հատ
3)գանգրափետուր հավալուսն(լատին.՝ Pelecanus)	22 հատ	72 հատ
4)Մեծ ձկնկուլ (լատին.՝ Phalacrocorax carbo)	9 հատ	46 հատ
5)Սովորական կաչաղակ (լատին.՝ Pica pica)	12 հատ	16 հատ
6)հայկական որոր(լատին.՝ Larus armenicus)	6687 հատ	5380 հատ
7)քարարծիվ(լատին.՝ Aquila rapax)	1 հատ	13 հատ
8) արտույտ (լատին.՝ Alaudidae)	14 հատ	12 հատ
9) մոխրագույն կաքավ, (լատին ՝ Perdix perdix)	9 հատ	6 հատ
10)մոխրագույն ագռավ,(լատին.՝ Corvus cornix)	4 հատ	5 հատ
11)կարմիր բադ (լատին.՝ Anas platyrhynchos)	17 հատ	53 հատ
12)կռնչան բադ (լատին.՝ Anas platyrhynchos)	21 հատ	98 հատ

13) Սպիտակ արագիլ (լատին.՝ Ciconia ciconia)	21 հատ	10 հատ
14) Սովորական սարյակ (լատին.՝ Sturnus vulgaris)	10 հատ	23 հատ
15)Տնային բվիճակ (լատին.՝ Athene noctua)	1 հատ	-
16)Սպիտակ խաղտտնիկ (լատին.՝ Motacilla alba),	2 հատ	-
17)Վարդագույն հավալուսն (լատին՝ elecanus onocrotalus)	-	34 հատ
18)Կվակվա(լատին՝ Nycticorax nycticorax)	-	29 հատ
19-Մոխրագույն տառեղ(լատին՝ Ardea cinerea)	-	26 հատ
20-Սպիտակ տառեղ (լատին՝Ardea cinerea)	-	16 հատ
21-Մոխրագույն կռունկ (լատին՝ Grus grus)	-	8 հատ
22-Սև փարփար (լատին՝ Fulica atra)	-	14 հատ
23-Տափաստանային հողմավար բազե (լատին՝ Falco naumanni)	-	5 հատ
24-Գորշ նապաստակ (լատին՝ Lepus europaeus)	-	7 հատ
25-Գորշուկ (լատին՝ Meles meles)	-	5 հատ
26-Աքիս (լատին՝ Mustela nivalis)	-	4 հատ
27-Դաշտային մուկ (լատին՝ Microtinae)	-	26 հատ
28-Սովորական Լորտու (լատին՝ Natrix natrix)	-	5 հատ
29-Գայլ (լատիներեն ՝ Canis lupus)	-	3 հատ
30Գարնանածաղիկ(լատին՝ Primula elatior)	-	2 քմ

31Պապլոր հայկական (լատին՝ Muscari armeniacum)	-	3 քմ
32 Վեռոնիկա պարսկական (լատին՝ Veronica persica)	-	4 քմ
33 Դեղին խաղտտնիկ (լատին՝ Motacilla flava)	-	3 հատ
34Կտցար (լատիներեն Dendrocopos major)	-	50 հատ
35Մեծ սղոցակտուց բադ (լատին՝ Mergus merganser)	-	2 հատ
36 Տարգալակտուց (լատին՝ Platalea leucorodia)	-	2 հատ
37Վայրի խոզ (լատին՝ Sus scrofa)	-	18 հատ
38 Հայկական ժայռային մողես (լատին՝ Darevskia armeniaca)	-	2 հատ
39 Դեղին կոկոռ (լատին՝ Nuphar lutea)	-	85 քմ
40 Տերեփուկ հայաստանյան (լատիներեն՝ Rhaponticoides hajastana)	-	3 քմ

«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝ Ս.Հարությունյան